

ՀԱՎԵԼՎԱԾ 1**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

«Դիվիսա Էյ Էմ» ՓԲԸ
Տնօրենի կողմից
Հրաման թիվ ՎՀ 06-18
“10” մայիսի 2018

ՓՈՓՈԽՎԱԾ Է

“Էքսիթի Էյ Էմ” ՓԲԸ
Գործադիր տնօրենի կողմից
Հրաման թիվ ՎՀ 21-19
“23” դեկտեմբերի 2019 թ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**1. Ընդհանուր դրույթներ**

1.1. Սույն Կանոնները սահմանում են «Էքսիթի Էյ Էմ» Փակ Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ Ներդրումային ընկերություն) կողմից պրոֆեսիոնալ հաճախորդներին մատուցվող ներդրումային ծառայություններ մատուցելու ընդհանուր կարգը:

1.2. Սույն Կանոնները սահմանվել են՝ համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, “Արժեթղթերի շուկայի մասին” ՀՀ օրենքի, Կանոնակարգերի և այլ իրավական ակտերի ինչպես նաև Ներդրումային ընկերության ներքին իրավական քաղաքականությունների և փաստաթղթերի:

1.3. Սույն Կանոններին համապատասխան և իր լիցենզիայի շրջանակներում, Ներդրումային ընկերությունը միայն պրոֆեսիոնալ հաճախորդներին մատուցում է հետևյալ ներդրումային ծառայությունները.

1.3.1. Արտարժույթի, թանկարժեք մետաղների, ինդեքսների գնային տարբերության պայմանագրերի գործարքների իրականացում.

1.3.1.1. հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում,

1.3.1.2. իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում,

1.3.1.3. իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարում:

1.3.2. Արտարժույթի փոխարկման գծով.

1.3.2.1. արտարժույթի դիվերային բրոքերային առք ու վաճառքի գործառնությունների իրականացում:

1.4. Ներդրումային ընկերությունն իր հաճախորդներին չի տրամադրում խորհրդատվություն՝ ֆինանսական գործիքներում ներդրում անելու վերաբերյալ և, որևէ կերպ, չի երաշխավորում կամ չի խրախուսում այս կամ այն ներդրման կատարումը կամ նախապատվությունը:

1.4.1. Առանձին դեպքերում Ներդրումային ընկերությունը կարող է իր հաճախորդներին տրամադրել՝

1.4.1.1. ֆինանսական գործիքի նախկինում դրսևորած վարքագծի կամ վերջինիս փաստացի ցուցիչների վերաբերյալ տեղեկատվություն,

1.4.1.2. ֆինանսական գործիքի վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն (առանց կոնկրետ հաճախորդի վիճակի փոփոխության հետ կապված նկատառումների),

1.4.1.3. Արտաքին աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա հրապարակումներ, նորություններ, հետազոտություններ և տեղեկություններ:

1.4.2. Հստակ պետք է արձանագրել, որ Ներդրումային ընկերությունը չի երաշխավորում կամ չի հանդիսանում կողմ՝ տվյալ տեղեկատվական աղբյուրի կամ դրանցից ստացված տեղեկատվության, երաշխավորության և խորհրդատվության հավաստիության, ամբողջականության և համապատասխանության համար և պատասխանատվություն չի ստանձնում հաճախորդի՝ այն որոշումների համար (ամբողջությամբ կամ մասնակի), որոնք

կայացվել են նշյալ տեղեկատվության հիման վրա: Ներդրումային ընկերությունը խորհուրդ է տալիս հաճախորդներին ներկայացված տեղեկությունները, տարբերակները կամ ուղեցույցերը դիտարկել՝ կոկրետ առանձին հանգամանքների համատեքստում:

- 1.5. Սույն Կանոններում օգտագործված տերմինները ընկալվում են Հավելված 3-ի Սահմանումներ բաժնում սահմանված հասկացությունների նշանակությամբ:

2. Տեղեկություններ՝ Ներդրումային ընկերության մասին

Լրիվ անվանումը՝ «Էքուիթի Էյ Էմ» փակ բաժնետիրական ընկերություն, կրճատ անվանումը՝ «Էքուիթի Էյ Էմ» ՓԲԸ;

- 2.1. Պետական գրանցումը՝ 10.07.2012թ., պետական գրանցման համարը՝ 11;
- 2.2. Լիցենզիա՝ ներդրումային ծառայությունների մատուցման 0011;
- 2.3. Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վ.Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա Բիզնես Կենտրոն, գրասենյակ 609;
- 2.4. Ինտերնետային կայքը՝ www.equiti.am, էլեկտրոնային հասցեն՝ info@equiti.am;
- 2.5. Ներդրումային Ընկերությունը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 6 հասցեում, հեռախոս՝ 583841, ինտերնետային կայք՝ www.cba.am, էլեկտրոնային հասցե՝ mcba@cba.am:

3. Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը և ներդրումային հաշվի բացումը

- 3.1. Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու նպատակով, դիմումատուն՝ առցանց (Ներդրումային ընկերության կայքէջում կամ տրամադրված հղմամբ) կամ Ներդրումային ընկերության գրասենյակում լրացնում է դիմում: Հաճախորդի
- 3.2. Հաճախորդի՝ որպես իրավաբանական անձ՝ Ներդրումային հաշիվ բացելու նպատակով պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝
- 3.2.1. Ներդրումային ընկերության՝ 3.1. կետի համաձայն լրացված դիմումի օրինակ;

- 3.2.2. գրանցման վկայական;
- 3.2.3. ընկերության կանոնադրությունը կամ այլ համարժեք փաստաթուղթ;
- 3.2.4. բաժնետերերի գրանցամատյանը/ցուցակը կամ համարժեք փաստաթուղթ;
- 3.2.5. տնօրենների գրանցամատյանը/ցուցակը կամ համարժեք փաստաթուղթ;
- 3.2.6. տնօրենների խորհրդի որոշումը;
- 3.2.7. անձը հաստատող փաստաթուղթ - դիմումում նշված յուրաքանչյուր բաժնետիրոջ, տնօրենի կամ լիազորված անձի՝ անձը հաստատող փաստաթուղթ կամ բացառապես լուսանկարով՝ պաշտոնական այլ փաստաթուղթ (անձնագիր, անհատականացման քարտ), որը պետք է ունենա MRZ (սարքային ընթերցման տիրույթ)- անձնագիր կամ անհատականացման քարտ;
- 3.2.8. բնակության վայրը հավաստող փաստաթուղթ - դիմումում նշված յուրաքանչյուր բաժնետիրոջ, տնօրենի կամ լիազորված անձի բնակության հասցեն փաստող՝ երրորդ անձի կողմից տրամադրված փաստաթուղթ, մասնավորապես բանկային տեղեկանք կամ բանկային հաշվի քաղվածք, կոմունալ վճարների վճարման քաղվածք, որը պետք է լինի տրամադրված ոչ վաղ քան նախորդ 3 ամիսների ընթացքում;
- 3.2.9. իրական շահառուի օտարերկրյա կարգավիճակի վերաբերյալ հայտարարագիր՝ ԱՄՆ հարկային գանձումների և հաշվետվությունների համար - W8Ben-E և/կամ FATCA (W9) - Եթե հաճախորդ ընկերության բաժնետերերը կամ իրական շահառուները ԱՄՆ ոչ ռեզիդենտներ են, ապա նրանք ներկայացնում են ընկերության անվամբ լրացված W8 Ben-E ձևի փաստաթուղթ: Եթե հաճախորդ ընկերության բաժնետերերը կամ իրական շահառուները ԱՄՆ ռեզիդենտներ են ապա դիմումատուն ներկայացնում է ընկերության անվամբ լրացված W8 Ben-E ձևի փաստաթուղթ, իսկ ընկերության բաժնետերերի և շահառուների անվամբ լրացված FATCA (W9) ձևի փաստաթուղթ;
- 3.2.10. Ներդրումային ընկերության ընդհանուր դրույթներ և պայմաններ (դիմումատուն պետք է ծանոթանա փաստաթղթին և ներկայացնի ստորագրված

էջի սկանավորված տարբերակը կամ համաձայնի և կնքի վերջինիս առցանց տարբերակը);

3.2.11. <<Պրոֆուսիոնալ Հաճախորդ>> և <<Միջոցների տիրապետման իրավունքի փոխանցման>>, միջոցների գրավադրման պայմանագիր,

3.2.12. Կենտրոնական բանկի տեղեկատվական բազայում գրանցվելու նպատակով <<Իրավաբանական անձ որակավորված ներդրող գրանցվելու համար>> դիմում (ԿԲ խորհրդի որոշում 4/06) - Ներդրումային ընկերությունը ապահովում է հիշյալ դիմումի թարգմանությունը և առաքումը << Կենտրոնական բանկ:

3.3. Հաճախորդի՝ որպես ֆիզիկական անձ, Ներդրումային հաշիվ բացելու նպատակով պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝

3.3.1. Ներդրումային ընկերության՝ 3.1. կետի համաձայն լրացված դիմումի օրինակը;

3.3.2. անձը հաստատող փաստաթուղթ - դիմումում նշված անձի՝ անձը հաստատող փաստաթուղթ կամ բացառապես լուսանկարով պաշտոնական այլ փաստաթուղթ (անձնագիր, անհատականացման քարտ), որը պետք է ունենա MRZ (սարքային ընթերցման տիրույթ)- Անձնագիր կամ անհատականացման քարտ;

3.3.3. բնակության վայրը հավաստող փաստաթուղթ - դիմումում նշված անձի բնակության հասցեն փաստող՝ երրորդ անձի կողմից տրամադրված փաստաթուղթ, մասնավորապես բանկային տեղեկանք կամ բանկային հաշվի քաղվածք, կոմունալ վճարների վճարման քաղվածք, որը պետք է լինի տրամադրված ոչ ուշ քան նախորդ 3 ամիսների ընթացքում;

3.3.4. իրական շահառուի օտարերկրյա կարգավիճակի վերաբերյալ հայտարարագիր՝ ԱՄՆ հարկային գանձումների և հաշվետվությունների համար - W8Ben;

3.3.5. <Պրոֆեսիոնալ հաճախորդ> և «Միջոցների տիրապետման իրավունքի փոխանցման», միջոցների գրավադրման պայմանագիր,

3.3.6. Կենտրոնական բանկի տեղեկատվական բազայում գրանցվելու նպատակով <<Ֆիզիկական անձ որակավորված ներդրող գրանցվելու համար>> դիմում, (ԿԲ

խորհրդի որոշում 4/06)- Ներդրումային ընկերությունը ապահովում է հիշյալ դիմումի թարգմանությունը և առաքումը ՀՀ Կենտրոնական Բանկ:

3.4. Բոլոր հաստատող փաստաթղթերը պետք է ներկայացվեն անգլերեն (կամ նոտարի թարգմանությամբ) ապոստիլով հաստատված/վավերացված, եթե այն չի կարող ստուգվել պաշտոնական հավաստի աղբյուրներից կամ դրանք չեն ներկայացվել ՓԼԱՑ առումով արդյունավետ համարվող երկրներում գրանցված գործընկեր ներդրումային ընկերություններից:

3.5. Անհրաժեշտության դեպքում, հայտի առանձնահատկություններից ելնելով, Ներդրումային ընկերությունը կարող է պահանջել հստակ նշված լրացուցիչ փաստաթղթեր կամ բացատրություններ հաճախորդի համապատասխանության գնահատման գործընթացը պատշաճ ձևով իրականացնելու նպատակով, եթե առկա չեն դրանք ստանալու հանրորեն մատչելի պաշտոնական աղբյուրներ: Հարցում կատարելիս կամ պահանջ ներկայացնելիս Ներդրումային ընկերությունը պետք է հաշվի առնի տեղեկության կամ փաստաթղթի առկայության հավանականությունը, ինչպես նաև տվյալ տարածքում գործող իրավական սահմանափակումները (մասնավոր կյանքի անձեռնմխելիություն):

3.6. Նախքան ներդրումային ծառայությունների պայմանագրի կնքումը և ներդրումային ծառայությունների մատուցումը, Ներդրումային ընկերությունը կիրառման ենթակա իրավական ակտերին և քաղաքականությանը համահունչ, դիմումատուին տրամադրում է հետևյալ տեղեկությունները և ստանում վերջինիս հավաստումը հետևյալի մասին.

- 3.6.1. տեղեկություններ ներդրումային ընկերության և մատուցվող ծառայությունների մասին;
- 3.6.2. շահերի բախումների քաղաքականությունների;
- 3.6.3. արտարժույթի և ֆինանսական շուկայի այլ գործիքակազմի;
- 3.6.4. ռիսկերի առկայության վերաբերյալ նախազգուշացում ծանուցումներ – ածանցյալ գործիքներով գնային տարբերության պայմանագրերի շուկայում գործարքների իրականացման առնչությամբ;

- 3.6.5. վայրի (շուկայի տեսակը) կամ ֆորեքս և CFD պայմանագրերի կատարման համար օգտագործվող էլեկտրոնային հավելումների (կամ այլ մեթոդների);
 - 3.6.6. վճարների, գանձումների և վճարման ենթակա հարկերի;
 - 3.6.7. գաղտնիության ապահովման քաղաքականության և անհատական տվյալների մշակման;
 - 3.6.8. Ներդրումային ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված հաճախորդին ներկայացվող՝ ընթացիկ ներդրումային ծառայությունների փաթեթի;
 - 3.6.9. հաճախորդի ստորագրման և կատարման համար ներկայացվող Ներդրումային ընկերության ընդհանուր դրույթների և պայմանների:
- 3.7. Օրենքի և ընկերության ՓԼԱՖ քաղաքականության համաձայն, նախքան հաճախորդ դառնալը, Ներդրումային ընկերությունը պարտավոր է ստուգել դիմումատուի անհատական տվյալները: Նախքան ներդրումային հաշվի գործարկումը և ներդրումային ծառայությունների մատուցումը, Ներդրումային ընկերությունը կարող է ողջամիտ հայեցողությամբ, օգտվել տարբեր ծառայություններից՝ դիմումատուի տվյալները ստուգելու նպատակով: Անհրաժեշտ համապատասխանության հավաստման իրականացումից հետո, Ներդրումային ընկերությունը որոշում է կայացնում՝ ներդրումային հաշիվ բացելու կամ դիմումը մերժելու վերաբերյալ:
- 3.8. Դիմումի հաստատման դեպքում, հաստատման ծանուցում է ուղարկվում հաճախորդին, հետագա հրահանգներով: Մերժման դեպքում, դիմումատուն տեղեկացվում է որոշման մերժման վերաբերյալ՝ ընդհանուր պատճառների նշմամբ, որոնք հիմք են հանդիսացել այդպիսի որոշումը մերժելու համար:

4. Պրեֆեսիոնալ Հաճախորդ

- 4.1. Հաճախորդի հետ մինչ Ներդրումային Ծառայությունների պայմանագրի կնքումը և դրան հաջորդող ներդրումային հաշվի բացումը Ներդրումային ընկերությունը իրականացնում է հաճախորդների պրոֆոսիոնալ կարգավիճակի գնահատում:

4.2. Հաճախորդը համարվում է պրոֆեսիոնալ հետևյալ դեպքերում.

- 4.2.1. ֆինանսական հաստատությունները, այդ թվում ներդրումային ընկերությունները, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերը, բանկերը, վարկային կազմակերպությունները,
- 4.2.2. ապահովագրական ընկերությունները,
- 4.2.3. ներդրումային, կենսաթոշակային ֆոնդերը և ներդրումային ֆոնդի կառավարիչները
- 4.2.4. Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության համայնքները, Կենտրոնական բանկը, օտարերկրյա պետությունները, օտարերկրյա պետությունների տեղական ինքնակառավարման մարմինները, օտարերկրյա պետությունների կենտրոնական բանկերը,
- 4.2.5. միջազգային ֆինանսական կազմակերպությունները, այդ թվում՝ Արժույթի միջազգային հիմնադրամը, Եվրոպական կենտրոնական բանկը, Եվրոպական ներդրումային բանկը,
- 4.2.6. օտարերկրյա պետությունում գրանցված այն իրավաբանական անձինք, որոնք, տվյալ պետության օրենսդրության համաձայն, իրավունք ունեն իրականացնելու սույն ենթակետով սահմանված որևէ անձի գործունեություն,
- 4.2.7. անձը, որը բավարարում է հետևյալ պահանջներից առնվազն 2-ին՝
 - դիմումի ներկայացմանը նախորդող 4 եռամսյակների ընթացքում արժեթղթերի շուկայում իրականացրել է 10 և ավելի գործարք միջին եռամսյակային կտրվածքով, ընդ որում՝ մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է առնվազն մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ,
 - հաճախորդի արժեթղթերի փաթեթի մեծությունը դիմումի ներկայացման պահին գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,

- հաճախորդը ֆինանսական շուկայում ունի առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որը պահանջում է հաճախորդին մատուցվող այն ծառայությունների հետ կապված գիտելիքներ, որոնց հետ կապված վերջինս նախաձեռնություն է իրականացնում պրոֆեսիոնալ դասակարգվելու համար:

4.2.8. իրավաբանական անձը, որի բոլոր մասնակիցները (բաժնետերերը, փայատերերը) հանդիսանում են սույն կետի «4.2.1 - 4.2.7» ենթակետերում նշված անձինք:

4.3. Հաճախորդները, ովքեր Օրենքում նշված ներդրումային ծառայություններից որևէ մեկի կամ բոլոր ծառայությունների մասով սովել են իրենց համաձայնությունը որպես պրոֆեսիոնալ որակավորվելու համար, գրավոր հայտարարություն են ներկայացնում Ընկերությանը՝ առ այն, որ

4.3.1. նրանք համաձայն են դասակարգվել որպես պրոֆեսիոնալ,

4.3.2. նրանք տեղյակ են, որ որպես պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգվելու դեպքում հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի մեխանիզմները կիրառելի չեն լինելու Ներդրումային ընկերության համար և, այդ առումով, իրենք չեն կարող ունենալ պաշտպանվածություն համապատասխան հնարավորություն:

4.4. Ներդրումային ընկերությունը տեղեկացնում է Հաճախորդին 4.3.2. պարագրաֆում նշված պահանջների բնույթի մասին:

4.5. Բոլոր այն դեպքերում, երբ Ներդրումային ընկերությունը բացահայտում է որ հաճախորդը դադարել է բավարարել Օրենքով սահմանված պրոֆեսիոնալ հաճախորդի համար սահմանված պահանջները, պարտավոր է ողջամիտ միջոցներ ձեռնարկել սահմանված կարգով Ներդրումային Ծառայությունների պայմանագրի լուծելու և/կամ ձեռնպահ մնալ պայմանագրի կնքելուց :

5. Ներդրումային հաշիվ

5.1. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելուց և ներդրումային հաշիվ բացելու մասին որոշում ընդունելուց հետո, Ներդրումային ընկերությունը՝ հաճախորդին ուղղված նախնական առևտրային առաջարկի հիման վրա կազմում և հաճախորդին է ներկայացնում վճարների գանձման վերաբերյալ համաձայնագիր, որը պետք է ներառի առնվազն 5.1.1 կամ 5.1.2 կետերում ներկայացված պայմանները.

5.1.1. հաճախորդին մատուցվող ներդրումային ծառայությունների և առևտրային հարթակում բացված առանձին հաշիվների գծով միջնորդավճարի հաշվարկման բազան և չափը (եթե նախատեսված է);

5.1.2. հավելագնի չափը կամ կիրառելի հավելագնի պրոֆիլի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրի մասին հղում (եթե նախատեսված է);

5.1.3. գանձման ենթակա սպասարկման ծառայությունների վճարներ (եթե նախատեսված է);

5.1.4. արտոնյալ վճարների սանդղակը՝ հաճախորդի կողմից որոշակի պահանջների բավարարման դեպքում: Նշյալ պահանջները և սանդղակը պետք է լինեն հստակ ձևակերպված (եթե նախատեսված է);

5.1.5. առևտրային կամ տեխնիկական առանձնահատկություններ պարունակող այլ մանրամասներ:

5.2. Վճարների գանձման վերաբերյալ համաձայնագիրը ստորագրելուց հետո, Ներդրումային ընկերությունը սկսում է ներդրումային հաշվի բացման գործընթացը և համարակալման քաղաքականության համաձայն՝ հաճախորդին և նրա հաշիվ(ներ)ին տրամադրում է անհատականացնող համար:

5.3. Ներդրումային ընկերությունն օրենդորության պահանջներին համաձայն վարում է հաճախորդի, ներդրումային հաշվի և մատուցված ներդրումային ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների ռեեստր:

6. Պատվերների կատարում, հանձնարականների ընդունում և հաղորդում

- 6.1. Ներդրումային ընկերությունը՝ ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում, առևտրային հարթակի միջոցով ընդունում և հաղորդում է կատարման կամ կատարում՝ ֆինանսական շուկայի գործիքներով գործարքների կատարման պատվերներ, որոնք կարող են լինել հաճախորդի կողմից Ներդրումային ընկերությանը ներկայացվող առաջարկի կամ հանձնարարության ձևով:
- 6.2. Ներդրումային ընկերությունը ընդունում, կատարում կամ հաղորդում է կատարման հաճախորդների պատվերը: Ընտրված առևտրային հարթակի գործառնական հնարավորությունից ելնելով, պատվերի տեսակները և հնարավորությունները կարող են տարբեր լինել:
 - 6.2.1. MT4 առևտրային հարթակի գործառնական հնարավորությունների համաձայն հաճախորդը կարող է ներկայացնել պատվերների հետևյալ տեսակները.
 - 6.2.1.1. <<Շուկայական Պատվեր>> - հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող հանձնարարականով՝ տվյալ պահին շուկայում գոյություն ունեցող գնով որոշակի ծավալով ֆինանսական գործիքներ գնելու կամ վաճառելու պատվերն է:
 - 6.2.1.2. <<Լիմիտային Պատվեր>> - հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է՝ դրանում նշված գնով կամ դրանից ավելի ցածր գնով (վաճառքի դեպքում՝ պատվերում նշված գնով կամ դրանից ավելի բարձր գնով) որոշակի ծավալի արժեթղթի առքի (վաճառքի) պատվերի կատարում.
 - 6.2.1.3. <<Ստոպ Պատվեր>>, որոշակի ծավալով ֆինանսական գործիքներ գնելու կամ վաճառելու պատվեր՝ շուկայում տվյալ պահին ձևավորվող գնով՝ պատվերում նշված ֆինանսական գործիքի շուկայական գինը նշված գնին հասնելու դեպքում:
- 6.3. Հաճախորդի միջոցներ - առաձին հաշիվներում պահվող հաճախորդի միջոցներ, կամ միջոցներ, որոնց տիրապետման իրավունքը պրոֆեսիոնալ հաճախորդները կփոխանցեն Ներդրումային ընկերությանը՝ ստորագրելով <<Պրոֆեսիոնալ

հաճախորդ որակավորման» և «Միջոցների տիրապատեման իրավունքի փոխանցման» համաձայնագիր: Հաճախորդի միջոցների տիրապետումը կանոնակարգվում է սույն կանոնի Հավելված 2-ով սահմանված պայմանագրի 5-րդ կետով:

- 6.3.1. 6.3.-րդ պարագրաֆում սահմանված միջոցները չեն օգտագործվի «Արժեթղթերի շուկայի մասին » ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված Ներդրումային ընկերության իրավունքների իրացման համար, եթե այլ բան սահմանված չէ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրով:
- 6.3.2. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված Ներդրումային ընկերության իրավունքները կարող են իրացվել միմիայն Ընկերության Սեփական Կապիտալի նկատմամբ, եթե այլ բան սահմանված չէ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրով:
- 6.3.3. 6.3.-րդ պարագրաֆում սահմանված միջոցները կօգտագործվեն միայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված Ներդրումային ընկերության իրավունքների իրացման նպատակով՝ ներառելով գործարքների կատարում՝ հաճախորդների պատվերների համադրմամբ, խաչմամբ կամ, եթե այլ բան սահմանված չէ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրով:
- 6.4. Ներդրումային ընկերությունը ձեռնարկում է բոլոր ողջամիտ ջանքերը՝ անմիջապես հետևելու հաճախորդի պատվերում նշված հանձնարարականներին կամ կատարելու կամ կատարման ներկայացնելու պատվերները՝ վերջիններիս ստանալու հերթականությամբ՝ առանց նախապատվություն տալու որևէ հաճախորդի պատվերը մեկ այլ հաճախորդի պատվերի նկատմամբ՝ դրանցում ներկայացված հանձնարարականների հավասար պայմանների և պայմանագրային հավասար պայմանների առկայության դեպքում:
- 6.5. Պատվերները կատարվում են դրանց ստանալու հերթականությամբ՝ 6.4. կետին համապատասխան՝ բացառությամբ, Ներդրումային ընկերության՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված

իրավունքներն իրացնելու դեպքերի, երբ հաճախորդի պատվերները կկատարվեն առաջնայնության սկզբունքով, եթե այլ բան նախատեսված չէ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրով:

- 6.6. Ընդհանուր առմամբ, ավելի լավ արդյունք ապահովելու նպատակով, Ներդրումային ընկերությունը կարող է համախմբել իր հաճախորդի պատվերը կամ իր հաշվին կատարվող գործարքն իր մեկ այլ հաճախորդի պատվերի հետ և այդ ձևով կատարել դրանք, եթե՝
 - 6.6.1. որևէ հաճախորդի համար այն չի ապահովում ավելի վատ արդյունք, քան այն դեպքում, եթե նրա պատվերը կատարվեր առանձին;
 - 6.6.2. ընդհանուր առմամբ, այն համապատասխանում է հաճախորդի շահերին:
- 6.7. Այն դեպքում, Ներդրումային ընկերությունը համախմբում է իր հաճախորդի պատվերը իր հաշվին կատարվող գործարքի հետ, ապա այդ համախմբված պատվերի մասնակի բավարարման դեպքում նախապատվությունը տրվում է հաճախորդին՝ բացառությամբ, եթե ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 6.8. Ներդրումային ընկերությունը Սույն կանոնների Հավելված 3-ով հաստատված «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ» պայմանագրի 25-րդ, 26.2-րդ և 26.7-րդ նախատեսված հաղորդակցման միջոցներից որևէ մեկով կձեռնարկի բոլոր ողջամիտ միջոցները՝ անմիջապես տեղեկացնելու հաճախորդին այն էական դժվարությունների և բացասական փաստերի մասին, որոնք հաճախորդի պատվերի պատշաճ ձևով կատարումը դարձնում են անհնարին: Հաճախորդի պարտականություն է անմիջապես տեղեկացնել Ներդրումային ընկերությանն՝ իր համար նախընտրելի հաղորդակցման եղանակի կամ տվյալների փոփոխության մասին: Նման դեպքում, հաճախորդը կրում է ծանուցում չներկայացնելու հետևանքով ծագող հնարավոր բացասական հետևանքների պատասխանատվությունը:
- 6.9. Հաճախորդի բոլոր պատվերները կատարվում են Չկարգավորվող Շուկայում:

6.10. Այն պարագայում երբ, իրացվելիության մատակարարը գտնում է որ որ ռիսկի աստիճանը չափազանց բարձր է, Ներդրումային ընկերությունը իրականացնում է գնահատում Հաճախորդին մատուցվող ծառայությունների հետագա նպատակահարմարության համար:

6.11.

7. Տեղեկատվություն ծախսերի և միջնորդավճարների մասին

7.1. Հաճախորդը պարտավորվում է կատարել վճարումներ:

7.2. Բոլոր վճարումների մասին հաճախորդը կձանուցվի գրավոր՝ նախքան համապատասխան գործարքի կամ պատվերի կատարումը: Հիշյալ վճարումները կսահմանվեն Համաձայնագրում կամ սահմանված կարգով գրավոր կներկայացվեն հաճախորդին և ուժի մեջ կմտնեն գրավոր նշված ժամկետում:

7.2.1. Հաճախորդը համաձայնվում է վճարել.

7.2.1.1. Վճարումներ - Ներդրումային ընկերության կողմից սահմանված միջնորդավճար, ինչպես նաև գործարքի համար Ներդրումային ընկերության կողմից նախատեսված այլ վճարներ կամ գանձումներ: Ներկայացված վճարումները կներկայացվեն Ներդրումային ընկերության կողմից հաճախորդին տրամադրվող քաղվածքում՝ առանձին հոդվածներով և;

7.2.1.2. Ներդրումային ծառայությունների մատուցման և վճարների գանձման վերաբերյալ համաձայնագրերում սահմանված ցանկացած վճարներ, միջնորդավճարներ, ֆինանսավորման և սվոպ վճարներ և;

7.2.1.3. Ներդրումային ծառայությունների մատուցման և վճարների գանձման վերաբերյալ համաձայնագրերում սահմանված ցանկացած ծախս, որը ներառում է բայց չի սահմանափակվում սվոպ վճարները, միջոցների ելքագրման ծառայությունների դիմաց գանձվող վճարները կամ տեխնիկական ենթակառուցվածքների սպասարկման վճարները և;

- 7.2.1.4. Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված՝ հաճախորդի անվճարունակության հետևանքով առաջացող ծախսերը, ներառյալ իրավական ծախսերը;
- 7.2.1.5. Եթե կիրառելի է - հաճախորդի կողմից ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում դրանց դիմաց գանձվող տույժերը: Այս դեպքում, ներդրումային ծառայությունների մատուցման և վճարների գանձման վերաբերյալ համաձայնագրում սահմանված տույժերը կգանձվեն բանկային օվերդրաֆթի տարեկան դրույքաչափի 1% համամասնությամբ հաշվարկված դրույքաչափով՝ հաշվարկված օրական կտրվածքով օրենքով սահմանված կարգով՝ կետանց օրից սկսած մինչև պարտավորությունների ամբողջական կատարումը, եթե այլ բան սահմանված չէ օրենքով;
- 7.2.1.6. Ներդրումային ընկերությունը կարող է կիրառել հավելագին մարկ-ափ կամ մարկ-դաուն (հաճախորդի պատվերի կատարման գնի և ածանցյալ գործիք առաջարկող կոնտրագենտի առաջարկի գնի տարբերություն). Ներդրումային ընկերությունը կարող է ներկայացնել նաև միայն միջնորդավճարով կամ միջնորդավճարի և մարկ-ափ կամ մարկ-դաունի համակցությամբ սակագնային առաջարկ;
- 7.2.1.7. Հաճախորդը համաձայն է, որ այն դեպքում, երբ նա ձեռք է բերում որևէ ֆինանսական գործիք, որին հետևում է վերջինիս հակառակ գործարքը, ապա դա կհանգեցնի ձեռքբերվող ֆինանսական գործիքի և հակառակ գործարքի առարկա հանդիսացող նույն ֆինանսական գործիքի սվոպ վճարների տարբերության գանձմանը:
- 7.3. Սվոպ վճարների և միջնորդավճարների հաշվարկման կիրառելի մեթոդները և օրինակներն առավել հանգամանորեն ներկայացված են Ներդրումային ընկերության «Սակագնային քաղաքականություն և առաջարկվող ֆինանսական գործիքներ» բաժնում (պարագրաֆ 8):
- 7.4. Բոլոր միջնորդավճարների, վճարների, հարկերի և գանձումների գծով Ներդրումային ընկերության նկատմամբ հաճախորդի պարտավորությունների

ծագման դեպքում, դրանք ենթակա են գանձման գործարքի կատարման պահից և նման նվազեցումները կկատարվեն անհապաղ հաճախորդի ներդրումային հաշվից՝ առևտրային հարթակի կողմից՝ ավտոմատ հաշվարկման և անմիջապես գանձման մեխանիզմի առկայության դեպքում: Նշված մեխանիզմի բացակայության դեպքում գանձման կարգը կսահմանվի Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի առանձին Հավելվածով:

- 7.5. Հաճախորդին կտրամադրվի գործարքի կատարման հետ կապված վճարման ենթակա ընդհանուր գինը ձևավորող մանրամասներ, այդ թվում բոլոր առնչվող վճարները, միջնորդավճարները, գանձումները, ծախսերը և մեր միջոցով վճարման ենթակա հարկերը կամ, եթե կոնկրետ գինը հնարավոր չի սահմանել, ապա տրամադրվում է տեղեկություն՝ գինը ձևավորող հաշվարկի մեխանիզմի և բազայի վերաբերյալ:
- 7.6. Եթե հաճախորդի գործարքի առարկա հանդիսացող Ֆինանսական գործիքի հիմքում ընկած արժույթը տարբեր է հաճախորդի Ներդրումային հաշվի բազային արժույթից, ապա Ներդրումային ընկերությունն ավտոմատ կփոխարկի ամբողջ գործարքի արժեքը, ներառյալ գանձումները և վճարները՝ հաճախորդի հաշվի արժույթով՝ գործարքի կատարման պահին: Բոլոր տեսակի արժույթների համար փոխարկման դրույքաչափը կորոշվի տվյալ պահին հասանելի շուկայում առկա փոխարկման միջին դրույքաչափի հիման վրա:

8. Սակագնային քաղաքականություն և առաջարկվող ֆինանսական գործիքներ

- 8.1. Սպրեդ - ածանցյալ գործիք առաջարկող կոնտրագենտի առաջարկի և դրա դիմաց ներկայացվող պահանջարկի գնի տարբերություն: Սպրեդերը կարող են ընդլայնվել շուկաների փակման կամ բացման ընթացքում:
- 8.2. Ներդրումային ծառայությունների մատուցման և վճարների գանձման վերաբերյալ համաձայնագրում սահմանվող՝ ֆորեքս և թանկարժեք մետաղներ սփոթ ածանցյալ գործիքներով գործարքների համար գանձվող միջնորդավճարները կարող են

տատանվել 0-ից 50 ԱՄՆ դոլլարի միջակայքում՝ ներկայացված գործարքի կես պտույտի համար՝ պայմանավորված սպասարկող առևտրային համակարգերի տրամադրմամբ կամ ինտեգրման տեխնիկական բարդությամբ, սպասվելիք գործարքների ծավալով, հաճախորդի դասակարգմամբ, միայն միջնորդավճար, թե միջնորդավճար՝ ուղեկցվող հավելագնով, սակագնային պլանի տեսակով և այլ գործոններով: Դրանք հաշվարկվում և գանձվում են՝ ֆինանսական գործիքի բազային արժույթի ծավալի նկատմամբ՝ գնահատված 1 միլիոն ԱՄՆ դոլլարի համամասնությամբ՝ կիրառված՝ հաճախորդի կողմից պատվերում ներկայացված ֆինանսական գործիքի պայմանագրի չափի վրա, որոնց առանձնահատկությունները սահմանված են 8.9. և 8.10. պարագրաֆներում:

8.3. Ներդրումային ծառայությունների մատուցման և վճարների գանձման վերաբերյալ համաձայնագրում սահմանվող՝ ինդեքսների գնային տարբերության պայմանագրերի միջնորդավճարները ներկայացված են ամբողջ պտույտի համար և կարող են տատանվել 0,02-ից մինչև 0,25 ԱՄՆ դոլլարի միջակայքում՝ պայմանավորված սպասարկող առևտրային համակարգերի տրամադրմամբ կամ ինտեգրման տեխնիկական բարդությամբ, սպասվելիք գործարքների ծավալով, հաճախորդի դասակարգմամբ և այլ գործոններով: Դրանք գանձվում են հաճախորդի պատվերում նշված լոտի (առանձնահատկությունները սահմանված են 8.8. և 8.9. պարագրաֆներում) չափի նկատմամբ:

8.4. CFD –երի կուտակային/սվոպ վճարներ.

8.4.1. CFD –երի կուտակային/սվոպ վճարները գանձվում են Նյու Յորքի ժամով մինչև 17.00 բացված և մինչև գանձման պահը չփակված դիրեքթերի համար: Կուտակային վճարի արժեքը՝ դիրքի հիմքում գտնվող CFD-ի համար վճարվող դիվիդենտի (առկայության դեպքում) և այդպիսի դիրքի կրման արժեքի համադրումն է: Նյու Յորքի ժամային գոտիով՝ ուրբաթ ժամը 17.00-ից հետո բաց մնացած դիրքերի համար կգանձվի եռօրյա կուտակային սվոպ՝ մինչև հաջորդող շաբաթվա սկիզբ դիրքերը բացված պահելու համար:

- 8.4.2. Կրման արժեքը հաշվարկվում է եռամսյա LIBOR դրույքի հիման վրա՝ համապատասխան CFD բազային արժույթի նկատմամբ: Օրինակ՝ քանի որ FR40 գնանշվում է Եվրոյով, Եվրոպական LIBOR կոգտագործվի որպես FR 40 կրման արժեքի հիմք:
- 8.4.3. Ներկայումս, դիվիդենտն ահնարին է առանձնացնել կուտակային սվոպ վճարից: Եթե ինդեքսի մաս հանդիսացող ընկերությունը վճարում է դիվիդենտ՝ Ձեր երկար դիրքերի համար, ապա կարճ դիրքերի համար գանձվում է նշյալ դիվիդենտը: Դիվիդենտը հիմնականում կրման օրական արժեքի չափի 10 - 100-ի բազմապատիկն է:
- 8.4.4. Կուտակային/սվոպ վճարների հաշվարկ.
- 8.4.4.1. հաճախորդի հաշվի նկատմամբ կիրառվող ընդհանուր կրեդիտագրումը կամ դեբետագրումը կատարվում է <<MT4>> հարթակի տոկոսադրույքային մեթոդով: US 30 սվոպ վճարի հաշվարկի օրինակը ԱՄՆ դոլլարով՝ ներկայացված է ստորև.
- Օրինակ՝ US 30 գինը օրվա ավարտին 18.500 և կարճ դիրքի համար սվոպ վճարի դրույքը -1: Համապատասխան <<MT4>> հարթակի կարգավորումների US 30 թիկ գինը = 0.01 և թիկ չափը = 0.1
- Սվոպ ԱՄՆ դոլլարով = $L_{\text{not}} * CFD \text{ օրվա ավարտի գին} * (\text{թիկ գին} / \text{թիկ չափ})^*$
(սվոպ դրույք / 100*360) * ԱՄՆ դոլլարի փոխարկման դրույքաչափ
- Սվոպ ԱՄՆ դոլլարով = $1 * 18.500 * (0.01 / 0.1) * (-1 / 100 * 360) * 1 = -0.051$ ԱՄՆ դոլլար:
- 8.4.5. Այն դեպքում, երբ հաճախորդը կրում է երկար դիրք՝ դիվիդենտների վճարման դեպքում, հաճախորդին վճարվում է հաշվարկված գումարը: Հակառակ դեպքում, եթե հաճախորդը կրում է կարճ դիրք՝ հաշվարկված գումարը գանձվում է նրանից: <<MT4>> հարթակի տոկոսադրույքային սվոպ հաշվարկի մեթոդի դեպքում Ներդրումային ընկերությունը՝ դիվիդենտի վճարումը փոխարկում և կատարում է հակադարձ հաշվարկում և վերագրում տարեկան տոկոսադրույքի: Վերջին կամ սպասվելիք դիվիդենտային վճարների վերաբերյալ տեղեկություններն առկա են հետևյալ հղմամբ (<https://www.dailyfx.com/dividend-calendar>):

8.5. Սփոթ/FX/թանկարժեք մեղադների կուտակային/սվոպ վճարներ.

8.5.1. Սփոթ/FX/թանկարժեք մեղադների կուտակային/սվոպ վճարները գանձվում են Նյու Յորքի ժամով մինչև 17.00 բացված և մինչև գանձման պահը չփակված դիրքերի համար: Կուտակային վճարի արժեքը դիրքի հիմքում գտնվող զույգի համար վճարվող դիվիդենտի (առկայության դեպքում) և այդպիսի դիրքի կրման արժեքի համադրումն է: Նյու Յորքի ժամային գոտիով՝ չորեքշաբթի ժամը 17.00-ից հետո բաց մնացած դիրքերի համար կգանձվի եռօրյա կուտակային սվոպ՝ մինչև հաջորդող շաբաթվա սկիզբ դիրքերը բացված պահելու համար:

8.5.2. Կուտակային/սվոպ վճարների հաշվարկ.

8.5.2.1. հաճախորդի հաշվի նկատմամբ կիրառվող ընդհանուր կրեդիտագրումը կամ դեբետագրումը կատարվում է <<MT4>> հարթակի՝ գնային միջակայքի չափման միավորի մեթոդով: 1 Լոտ EUR/USD սվոպ վճարի հաշվարկի օրինակը ԱՄՆ դոլլարով՝ ներկայացված է ստորև.

Օրինակ՝ EUR/USD գինը օրվա ավարտին 1 EUR=1.1 USD և կարճ դիրքի համար սվոպ վճարի դրույքը 3.43: Համապատասխան <<MT4>> հարթակի կարգավորումների EUR/USD կլորացման նիշը = 5 և 1 Լոտը = 100.000 պայմանագիր,

Սվոպ ԱՄՆ դոլլարով = $(1 / 10^* \text{կլորացման նիշ}) * \text{Լոտ} * \text{պայմանագրի չափ} * \text{սվոպ դրույք} * \text{Գնանշման արժույթ/ԱՄՆ դոլլար փոխարկման դրույքաչափ} * \text{կուտակված օրեր}$:

Սվոպ ԱՄՆ դոլլարով = $(1/105)*1*100,000*3.43*1.1*1=3.773$ ԱՄՆ դոլլար յուրաքանչյուր լոտի համար:

8.6. CFD-ների պատվերի չափը և անհրաժեշտ մարժայի պահանջները.

Ներդրումային ընկերության (ՆԸ) MT4 գործիքակազմ	Մարժայի պահանջներ	Պատվերի չափի տեսակ
USOil	1%	Standard Lot
UKOil	1%	Standard Lot
NGAS	1%	Standard Lot
COPPER	1%	Standard Lot
JP225	1%	Standard Lot
EU50	1%	Mini Lot
FR40	1%	Mini Lot
DE30	1%	Mini Lot
HK50	10%	Mini Lot
UK100	1%	Mini Lot
US500	1%	Standard Lot
UT100	1%	Mini Lot
US30	1%	Mini Lot
ES35	1%	Mini Lot
AU200	1%	Mini Lot

8.6.1. մարժայի նկատմամբ ներկայացվող պահանջները կարող են փոխվել՝ շուկայում տեղի ունեցող ծայրահեղ տատանումների ընթացքում՝ ծանուցմամբ կամ առանց դրա:

8.7. Ֆյուչերս տեսակի CFD-ների MT4 կարգավորումներ.

ՆԸ MT4 գործիք ակազմ	Նվգ./առվ. լուտեր	Արժույթ	Գործիքի գնի կլորացման նիշ	Գործիքի արժույթ/մարժայի ն արժույթ	Գործիքի մարժայի հաշվարկի մեթոդ	Գործիքի շահույթի հաշվարկի մեթոդ	Գործիքի պայմանագրի չափ	Փիփի արժեքը արժույթով արտահայտված	Գործիքի թիկի չափը	Գործիքի թիկի գինը	Գործիքի թիկի տոկոսը	հեջավորման դեպքում մարժայի նկատմամբ պահանջը
USOil	1/3000	USD	3	USD / USD	CFD	CFD	10	\$0.10	0.001	0.001	1	0,0,0
UKOil	1/3000	USD	3	USD / USD	CFD	CFD	10	\$0.10	0.001	0.001	1	0,0,0
COPPER	1/3000	USD	4	USD / USD	CFD	CFD	100	\$0.10	0.0001	0.0001	1	0,0,0
NGAS	1/3000	USD	4	USD / USD	CFD	CFD	100	\$0.10	0.0001	0.0001	1	0,0,0

8.8. Ինդեքս տեսակի CFD-ների MT4 կարգավորումներ.

ՆԸ MT4 գործի քակազմ	Նվգ./առվ. լոտեր	Արժույթ	Գործի քի գնի կլորացման նիշ	Գործի քի արժույթ/մարժային արժույթ	Գործի քի մարժայի հաշվարկի մեթոդ	Գործի քի շահույթի հաշվարկի մեթոդ	Գործի քի պայմանագրի չափ	Փիփի արժեքը արժույթով արտահայտված	Գործի քի թիկի չափը	Գործի քի թիկի գինը	Գործի քի տոկոսը	Ինքնավորման դեպքում մարժայի նկատմամբ պահանջը
JP225	1/3000	JPY	1	JPY / JPY	CFD-Index	Futures	10	JPY 1	0.1	0.1	1	0,0,0
EU50	1/3000	EUR	1	EUR / EUR	CFD-Index	Futures	1	€ 0.10	0.1	0.01	1	0,0,0
FR40	1/3000	EUR	1	EUR / EUR	CFD-Index	Futures	1	€ 0.10	0.1	0.01	1	0,0,0
DE30	1/3000	EUR	2	EUR / EUR	CFD-Index	Futures	1	€ 0.10	0.01	0.001	1	0,0,0
HK50	1/3000	HKD	1	HKD / HKD	CFD	Futures	1	HDK 0.10	0.1	0.01	1	0,0,0
UK100	1/3000	GBP	1	GBP / GBP	CFD-Index	Futures	1	£ 0.10	0.1	0.01	1	0,0,0
US500	1/3000	USD	2	USD / USD	CFD-Index	CFD	1	\$0.10	0.01	0.01	1	0,0,0
UT100	1/3000	USD	1	USD / USD	CFD-Index	Futures	1	\$0.10	0.1	0.01	1	0,0,0
US30	1/3000	USD	1	USD / USD	CFD-Index	Futures	1	\$0.10	0.1	0.01	1	0,0,0
ES35	1/3000	EUR	1	EUR / EUR	CFD-Index	Futures	1	€ 0.10	0.1	0.01	1	0,0,0
AU200	1/3000	AUD	1	AUD / AUD	CFD-Index	Futures	1	AUD 0.10	0.1	0.01	1	0,0,0

8.9. Սփոթ FX գործիքների MT4 կարգավորումներ.

Զույգեր	Նվգ պատվերի չափ	Կլորացման նիշ	Արժույթ/մարժային արժույթ	Առևտրային ժամերի դադար (եթե առկա)	Պայմանագրի չափ
AUDCAD	1000	5	AUD / AUD	n/a	100000
AUDCHF	1000	5	AUD / AUD	n/a	100000
AUDJPY	1000	3	AUD / AUD	n/a	100000
AUDNZD	1000	5	AUD / AUD	n/a	100000

AUDSGD	1000	5	AUD / AUD	n/a	100000
AUDUSD	1000	5	AUD / AUD	n/a	100000
CADCHF	1000	5	CAD / CAD	n/a	100000
CADJPY	1000	3	CAD / CAD	n/a	100000
CADSGD	1000	5	CAD / CAD	n/a	100000
CHFJPY	1000	3	CHF / CHF	n/a	100000
CHFSGD	1000	5	CHF / CHF	n/a	100000
EURAUD	1000	5	EUR / EUR	n/a	100000
EURCAD	1000	5	EUR / EUR	n/a	100000
EURCHF	1000	5	EUR / EUR	n/a	100000
EURDKK	1000	5	EUR / EUR	n/a	100000
EURGBP	1000	5	EUR / EUR	n/a	100000
EURHKD	1000	5	EUR / EUR	n/a	100000
EURJPY	1000	3	EUR / EUR	n/a	100000
EURMXN	1000	5	EUR / EUR	n/a	100000
EURNOK	1000	5	EUR / EUR	n/a	100000
EURNZD	1000	5	EUR / EUR	n/a	100000
EURPLN	1000	5	EUR / EUR	n/a	100000
EURSEK	1000	5	EUR / EUR	n/a	100000
EURSGD	1000	5	EUR / EUR	n/a	100000
EURTRY	1000	5	EUR / EUR	n/a	100000
USDNOK	1000	5	USD / USD	n/a	100000
USDPLN	1000	5	USD / USD	n/a	100000
USD RUB	1000	5	USD / USD	n/a	100000
USDSEK	1000	5	USD / USD	n/a	100000
USDSGD	1000	5	USD / USD	n/a	100000
USDTRY	1000	5	USD / USD	n/a	100000
USDZAR	1000	5	USD / USD	n/a	100000

8.10. Սփոթ թանկարժեք մետաղներ տեսակների գործիքների MT4 կարգավորումներ.

Չույգեր	Նվազ պատվերի չափ	Կլորացման նիշ	Արժույթ/մարժային արժույթ	Առևտրային սեսիայի սկիզբ/ավարտ	Սեսիայի ընդմիջում	Ուրբաթ փակման ժամ	Պայմանագրի չափ
XAGUSD	50	3	XAG / USD	Sunday / 23:00 GMT	22:00-23:00GMT	22:00 GMT	5000
XAUUSD	1	2	XAU / USD	Sunday / 23:00 GMT	22:00-23:00GMT	22:00 GMT	100
XPDUSD	1	2	XPD / USD	Sunday / 23:00 GMT	22:00-23:00GMT	22:00 GMT	100
XPTUSD	1	2	XPT / USD	Sunday / 23:00 GMT	22:00-23:00GMT	22:00 GMT	100

8.11. Մարժայի և շահույթի հաշվարկման մեթոդները.

Արժեթղթի տեսակ	MT4 գործիքի մարժայի հաշվարկ	MT4 գործիքի շահույթի հաշվարկ
FX	Forex [Lոտ * պայմանագրի չափ / վարկավորման գործակից* % / 100]	Forex [(Փակման գին- բացման գին) * պայմանագրի չափ * Lոտ]
Թանկարժեք մետաղներ	Forex [Lոտ * պայմանագրի չափ / վարկավորման գործակից* % / 100]	Forex [(Փակման գին- բացման գին) * պայմանագրի չափ * Lոտ]

8.12. Հաճախորդին տրամադրվում է 8.1.-8.10. պարագրաֆներում ներկայացված տեղեկատվությունը, ինչպես նաև ֆյուչերս տեսակի CFD-ների օրացույցը՝ դրանց պայմանագրի տևողությունը, ինչպես նաև բոլոր գործիքների մասով առևտրային ժամերը:

9. Գրանցումների վարում

9.1. Ներդրումային ընկերությունը իր կողմից մատուցվող ներդրումային ծառայությունների շրջանակներում իր նեքին կարգերի (նախատեսված է տեխնիկական սպասարկում իրակացնող գործընկերոջ հետ կնքած պայմանագրով), վարում է գրանցումներ՝ իր հաճախորդների, վերջիններիս հետ կնքված պայմանագրերի, նրանցից ստացված պատվերների, պատվերներով կատարված գործարքների վերաբերյալ: Գրանցումները պահպանվում է հաճախորդի հետ գործարար հարաբերությունների դադարելուց հետո 7 տարի ժամկետով: Գործող օրենսդրության և կանոնակարգերի դրույթների համաձայն, առանձին դեպքերում, որոշ տեղեկություններ կամ հաճախորդի վերաբերյալ տվյալներ կարող են պահպանվել ավելի երկար ժամկետով:

9.2. Հաճախորդների գործարքների կատարման համար նախատեսված համակարգերի և էլեկտրոնային բազաների տեխնիկական սպասարկումը (որտեղ կատարվում են գործարքների գրանցումները) իրականացվում է համապատասխան սպասարկող ընկերության կողմից՝ համաձայն ներդրումային և սպասարկող ընկերությունների միջև կնքված սպասարկման պայմանագրի:

10. Հաշվառում և հաշվետվություններ

10.1. Ներդրումային ընկերությունը հաճախորդից ընդունած պատվերներով կատարած գործարքների վերաբերյալ հաճախորդին անհապաղ, սակայն ոչ ուշ, քան գործարքի կնքման հաջորդող աշխատանքային օրվա ավարտը, ընդունված կապի հուսալի միջոցներով տրամադրում է հաշվետվություններ:

10.2. Ներդրումային ընկերությունը հաճախորդին տրամադրում է ամսական կտրվածքով ամփոփ հաշվետվություն՝ իր առանձին հաշիվների գծով՝ օրացուցային ամսվա ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

10.3. Հաշվի վերաբերյալ քաղվածքը պարունակում է տվյալներ հետևյալի մասին՝

- 10.3.1. պատվերում նշված ֆինանսական գործիքի անվանումը;
- 10.3.2. պատվերի կատարման ամսաթիվը (օր/ամիս/տարի ժժ:րր:վվ);
- 10.3.3. հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մուտքերը;
- 10.3.4. հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ելքերը;
- 10.3.5. հաշվետու ժամանակաշրջանի վերջում հաշվի մնացորդը;
- 10.3.6. հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում փակված դիրքերը;
- 10.3.7. հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ բաց դիրքերը;
- 10.3.8. բաց և փակ դիրքերի գործարքների համարը;
- 10.3.9. կնքված բայց դեռևս չկատարված գործարքների պատվերի ամսաթիվը (օր/ամիս/տարի ժժ:րր:վվ);
- 10.3.10. պատվերի տեսակը (առք/վաճառք, լիմիտ/շուկայական);
- 10.3.11. ծավալը (Լոտի չափ);
- 10.3.12. դիրքի բացման/փակման գները (բաց դիրքերի համար որպես փակման գին տրամադրվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին դրությամբ շուկայական գինը);
- 10.3.13. կուտակված սվոպ վճարները;
- 10.3.14. միջնորդավճարները;
- 10.3.15. փակված դիրքերի համար՝ ֆիքսված, բաց դիրքերի համար՝ լողացող շահույթի/վնասի չափերը;

- 10.3.16. հասանելի մարժայի չափը;
- 10.3.17. հասանելի գումարի չափի մասին տվյալներ:
- 10.4. Հաճախորդներին տրմադրվող հաշվետվությունների լեզուն անգլերենն է:

11. Արտարժույթային փոխարկման ծառայությունների քաղաքականություն

11.1. Ներդրումային ընկերությանը հաճախորդի կողմից ներկայացված արժույթի փոխարկմամբ՝ տարբեր բազային արժույթներով իր հաշիվների միջև գումարի փոխարկման փոխանցման պատվեր

11.1.1. Էլեկտրոնային հարթակում հաճախորդի կողմից մեկ արժույթով հաշվից իրեն պատկանող մեկ այլ արժույթով հաշվին արժույթի փոխարկմամբ գումարի փոխանցման պատվերը (այսուհետ՝ Փոխանցման պատվեր) կներկայացվի կատարման՝ հաճախորդի կողմից Ընկերության accounts@equiti.am էլեկտրոնային հասցեին ուղարկելով համապատասխան հրահանգներ:

11.2. Փոխարկումն իրականացնող բանկ.

11.2.1. հաճախորդի կողմից փոխանցման պատվերը ստանալուց հետո, Ընկերությունը սկսում է փոխարկման դրույքաչափի վերաբերյալ բանակցություններ այն բանկերի հետ, որտեղ Ընկերությունն ունի հաճախորդի միջոցների պահպանման համար նախատեսված բանկային հաշիվներ՝ փոխանցման պատվերի վերջնական արժույթով: Արտարժույթի փոխարկում իրականացնող է ընտրվում այն բանկը, որն առաջարկում է փոխարկման լավագույն բազային դրույքաչափ:

11.3. Փոխարկման բազային դրույքաչափ.

11.3.1. Փոխարկման բազային դրույքաչափը՝ Ընկերության և փոխարկումն իրականացնող բանկի միջև սակարկման արդյունքում որոշված փոխարկման դրույքաչափն է:

11.4. Փոխարկման հավելյալ դրույքաչափ.

- 11.4.1. Փոխարկման հավելյալ դրույքաչափը Ընկերության կողմից սահմանված հավելյալ դրույքաչափն է՝ ի հավելումն փոխարկման բազային դրույքաչափի՝ մատուցվող ծառայության համար:
- 11.5. Փոխարկման առաջարկի դրույքաչափ.
 - 11.5.1. Փոխարկման առաջարկի դրույքաչափը փոխարկման բազային դրույքաչափի և փոխարկման հավելյալ դրույքաչափի համադրումն է, որն առաջարկվում է հաճախորդին՝ ի պատասխան նրա Փոխանցման պատվերի: Փոխարկման առաջարկի դրույքաչափը չի կարող լինել ավելին քան փոխարկումն իրականացնող բանկի կողմից՝ իր կայքում փոխարկման օրվա դրությամբ սահմանված փոխարկվող արժույթի գնման գնի և վերջնական արժույթի վաճառքի գնի հարաբերակցությունը:
- 11.6. Փոխարկման առաջարկի դրույքաչափի ընդունում.
 - 11.6.1. Փոխարկման առաջարկի դրույքաչափը հաճախորդի կողմից կարող է հաստատվել կամ մերժվել: Հաստատումը կարող է լինել էլեկտրոնային նամակի ձևով՝ ի պատասխան փոխարկման առաջարկի դրույքաչափի վերաբերյալ Ընկերության կողմից հաճախորդին ուղղված նամակի: Հաստատման դեպքում փոխարկման առաջարկի դրույքաչափը ֆիքսվում է որպես փոխարկման վերջնական դրույքաչափ:
- 11.7. Փոխանցման պատվերի կատարում
 - 11.7.1. Փոխարկման վերջնական դրույքաչափի հաստատումից հետո Ընկերությունը հարթակում կատարում է հաճախորդի փոխանցվող հաշվից գումարի ելքագրում՝ փոխանցման պատվերում նշված գումարի չափով, իսկ ստացող հաշվին գումարի մուտքագրում՝ պատվերում նշված գումարի և փոխարկման վերջնական դրույքաչափի բազմապատիկի չափով:

12. Հաճախորդին կարճաժամկետ փոխառության տրամադրման քաղաքականություն

12.1. Ներդրումային ընկերությունը պարտավոր չէ կատարել հաճախորդի ներդրումային հաշվի համալրում կամ որևէ փոխառության տրամադրում՝ նախքան՝ հաճախորդին նախապես տրամադրված տվյալների համաձայն, Ներդրումային ընկերության բանկային հաշվին վերջինիս կողմից ուղարկվող միջոցների փաստացի և ժամանակին հաշվեգրումը և դրանց աղբյուրների օրինականության պատշաճ ստուգումը/դիտարկումը:

12.2. Ներդրումային ընկերությունը՝ ներառյալ 12.3. պարագրաֆում ներկայացված դեպքի, իրավունք ունի մերժել հաճախորդի կողմից ուղարկված միջոցների համալրումը և իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություն՝ եթե նշված միջոցներն ուղարկվել են Ներդրումային ընկերության կողմից պատշաճ համապատասխանության ուսումնասիրության համատեքստում՝ նախկինում ուսումնասիրված և չհաստատված ֆինանսական հաստատություններից:

12.3. Հաճախորդին պատշաճ ծառայություններ մատուցելու նպատակով, Ներդրումային ընկերությունը կարող է իրականացնել հաճախորդի հաշվի համալրում՝ ժամանակավոր փոխառության գործարքի ձևով, որը կելքագրվի՝ փաստացի ուղարկված միջոցների ստանալուց և հաշվեգրելուց հետո:

12.4. Ներդրումային ընկերությունը կարող է հաստատել ժամանակավոր փոխառության տրամադրումը ուղարկվող ամբողջ գումարի չափով կամ դրա մասնակի համամասնությամբ՝ կախված գումարի փոխանցումը հավաստող փաստաթղթերի կարգավիճակից, հաճախորդի՝ նախնինում կատարած փոխանցումների չափից, աղբյուրից, քանակից, փոխանցման պահին, հաճախորդի հասանելի մարժայի համամասնությունից, որոնք սահմանվում են Ընկերության Ներքին քաղակականությամբ:

12.5. Ներդրումային ընկերությունն, իրավունք ունի ելքագրել հաշվեգրված փոխառությունը՝ ներառյալ բայց առանց սահմանափակման հետևյալ դեպքերի՝

12.5.1. շուկայում տեղի ունեցող ցնցումների

12.5.2. փոխանցման օրինականության վերաբերյալ հիմնավոր մտահոգություն առկայության;

12.5.3. Ներդրումային ընկերության բանկային հաշվին հաճախորդի կողմից ուղարկված միջոցների՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում չհաշվեգրվելու;

12.5.4. հաճախորդին նախապես տեղեկացնելուց հետո, բաց դիրքերում փոփոխություններ չկատարելու:

13. Այլ դրույթներ

13.1. Սույն Կանոնները ուժի մեջ են մտնում Ներդրումային ընկերության ղեկավար մարմնի կողմից հաստատվելու պահից:

13.2. Ներդրումային ընկերությունը սույն կանոններում փոփոխություններ և լրացումներ կատարում է միակողմանի, որոնք ուժի մեջ են մտնում Ներդրումային ընկերության ղեկավար մարմնի կողմից հաստատվելու պահից: